# ՄԱՅՐԵՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

1

# ՄԱՅՐԵՆԻ 1

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

**Հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարանի սովորողների համար**

**Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն**

**Երևան 2021**

**ՀՏԴ ....**
**ԳՄԴ ...**
**Ի ...**

Մայրենի 1 աշխատանքային գիրք-տետր, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, 2021, 43 էջ:

Աշխատանքային գիրք-տետրը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից որպես ուսումնական նյութ:

Աշխատանքային գիրք-տետրը հրատարակության է երաշխավորվել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ և
ներառական կրթության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:

**Գրախոսներ՝** մ.գ.թ., դոցենտ Ազատյան Թ.Յու.
բ.գ.թ., դոցենտ Ավագյան Լ.Մ.

**Հեղինակներ՝**
Միքայելյան Ա.Վ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Սվաջյան Ա.Հ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Խմբագիր՝** Օհանյան Հ.Վ.

**Համակարգչային ձևավորում՝** Ստեփանյան Ա.Ռ.

**Նկարազարդում՝** Մնացականյան Կ.Բ.
Ստեփանյան Ա.Ռ.

Սույն աշխատանքային գիրք-տետրի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին «Մայրենի» առարկայի նախաայբբենական շրջանի ուսումնառության ընթացքում լրացուցիչ, առավել պարզեցված և հարմարեցված ուսումնական նյութերի տրամադրումն է:

ISBN

**ՀՏԴ ....**
**ԳՄԴ ...**

©Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2021

# ՆԱԽԱԲԱՆ

Սույն աշխատանքային գիրք-տետրը հասցեագրված է առաջին դասարանում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին, նրանց ուսուցիչներին, ծնողներին և նպատակաուղղված է գրաճանաչության նախաայբբենական շրջանի դժվարությունները տարաբնույթ առաջադրանքների կատարման միջոցով հաղթահարելուն:

Ուսումնական գործընթացում իրականացրած ցանկացած գործունեության վերջնարդյունքը մեծապես պայմանավորված է նաև այն նախապատրաստական աշխատանքով, որը նախորդում է դրան: Կարդալու և գրելու ուսուցման գործընթացը բարդ է ընդհանրապես, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի համար՝ երբեմն անհաղթահարելի: Հետևաբար գրաճանաչության նախաայբբենական շրջանում պետք է դրվեն այն հիմքերը, որոնք կնպաստեն կարդալու և գրելու կարողության ձևավորման գործընթացին և ոչ միայն:

Մեր դիտարկումները, համապատասխան ուսումնասիրությունները, զրույցներն ու հարցախույզները ցույց տվեցին, որ համընդհանուր ներառման պայմաններում տարրական դասարանների ուսուցիչները դժվարություններ են ունենում մայրենիի դասագործընթացում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքները կազմակերպելիս: Այս առումով, սույն աշխատանքային գիրք-տետրի ստեղծումով փորձել ենք ուսուցիչներին առաջարկել տարաբնույթ առաջադրանքներ ու վարժություններ, որոնք կզուգակցվեն այբբենարանով կազմակերպվող աշխատանքներին: Առաջարկվող վարժությունները կարելի է կիրառել ստեղծագործաբար՝ հաշվի առնելով տվյալ աշակերտի անհատական առանձնահատկությունները և ուսումնական կարիքները:

Սույն աշխատանքային գիրք-տետրում ընդգրկել ենք տարատեսակ առաջադրանքներ, որոնք միտված են գրաճանաչության նախաայբբենական շրջանի խնդիրների լուծմանը. մասնավորապես հոգեկան բոլոր գործընթացների՝ մտածողության, հիշողության, ուշադրության, խոսքի զարգացմանը, մանր շարժունակության զարգացածության անհրաժեշտ մակարդակի ապահովմանը, տարածության մեջ կողմնորոշվելու սովորողների ունակության զարգացմանը, վերլուծահամադրական ունակությունների զարգացմանը, որը, ինչպես հայտնի է, կարդալու և գրելու կարողության հիմքն է:

Առաջադրանքները կազմված են այնպես, որ աշակերտին մղեն որոշակի ակտիվ գործողություններ կատարելուն: Դրանք համապատասխանում են առարկայական ծրագրի և կրթական չափորոշչի պահանջներին:

Աշխատանքային գիրք-տետրն ունի նաև հավելված, որում տեղադրված պատկերները կօգտագործվեն այս կամ այն առաջադրանքի կատարման ընթացքում:

## Բարի գալուստ «Այբբենարանի» կախարդական աշխարհ
## (խոսք, պատմություն-գծապատկեր)

1. ա) Հավելվածից ընտրի՛ր մասերը և ստացի՛ր նկարը՝ անվանելով յուրաքանչյուր գործողությունը:
   բ) Ստացված նկարը տեղադրի՛ր (ուսուցչի օգնությամբ) ուղղանկյուն շրջանակի մեջ:
   գ) Պատմի՛ր՝ ի՞նչ ստացար (Ի՞նչ ես տեսնում: Ի՞նչ կենդանիներ կան նկարում: Ի՞նչ են անում երեխաները:)

(Տե՛ս հավելված 1)



**Աշխարհի գույները (նկար-պատմություն)**

2. ա) Ցո՛ւյց տուր կարմիր գույնի առարկաները: Անվանի՛ր դրանք:















բ)  Ցույց տուր կանաչ գույնի առարկաները: Անվանիր դրանք:
գ) Ցույց տուր դեղին գույնի առարկաները: Անվանիր դրանք:
դ) Տեղադրիր կարմիր շերտիկը համապատասխան գույնի նկարի տակ (վրա, կողքը):
(Տես հավելված 2)
ե) Տեղադրիր դեղին շերտիկը համապատասխան գույնի նկարի տակ (վրա, կողքը):
(Տես հավելված 2)
զ) Տեղադրիր կանաչ շերտիկը համապատասխան գույնի նկարի տակ (վրա, կողքը):
(Տես հավելված 2)

3. Նկարում գտիր և ցույց տուր դեղին ծաղիկը, կարմիր գլխարկով աղջկան, կարմիր փուչիկը:



4. ա) Մրգերի շարքից նշի՛ր կանաչ գույն ունեցող միրգը/մրգերը: Անվանի՛ր:













բ) Ո՞ր միրգը չես սիրում, նշի՛ր: Ի՞նչ գույնի է:

## Առարկաների ձևեր և գույներ

5. Գունավորի՛ր ըստ օրինակի:





6. Առանց ընդհատելու՝ տրված կետերը միացրու մեկ գծով:



7. Նշիր այն պատկերը, որում քառակուսի կա:



8. Նշիր այն պատկերները, որոնցում եռանկյունի կա:



**Առարկաների հատկությունները՝ մեծ, փոքր: Երկար, կարճ:**
**(Համեմատել, հակադրել, դասակարգել առարկաները՝ գտնելով նմանությունները և տարբերությունները)**
**(պատմություն)**

9. ա) Նկարների շարքում ցո՛ւյց տուր ամենամեծ կենդանին:



բ) Նկարների շարքում ցո՛ւյց տուր ամենափոքր կենդանին:

գ) Թվարկի՛ր նկարների անվանումները փոքրից մեծ հաջորդականությամբ:

10. Սև գույնի մատիտով ներկի՛ր ամենամեծ կենդանու պատկերը: Անվանի՛ր այն:



11. Ամենափոքր տնակում ո՞ր կենդանուն կտեղադրես: (Միացրո՛ւ գծով:)



12. ա) Ուշադի՛ր դիտիր նկարը: Ասա՛՝ ո՞ր պատկերն է ամենամոտը, ո՞րն է ամենահեռվում:



բ) Անվանի՛ր նկարի առարկաներն ըստ տեղադրության՝ մոտիկից հեռու և հակառակը:

13. Դասավորի՛ր առարկաները մեծից փոքրը (փոքրից մեծը) հաջորդականությամբ (տե՛ս հավելված 3):
ա) Ասա՛՝ ո՞ր առարկան է վերջինը:
բ) Ասա՛՝ ո՞րն է առաջինը:

14. ա) Սկզբից մինչև վերջ մատիտով (մատով, հայացքով) անցի՛ր կարմիր գծի վրայով և հասի՛ր փղիկին:

բ) Սկզբից մինչև վերջ մատիտով (մատով, հայացքով) անցի՛ր կանաչ գծի վրայով և հասի՛ր փուչիկին:

գ) Սկզբից մինչև վերջ մատիտով (մատով, հայացքով) անցի՛ր կապույտ գծի վրայով և հասի՛ր ծաղիկին:



15. Ի՞նչ գույն ունի ամենակարճ թելով փուչիկը:



16. Ի՞նչ գույն ունի ամենակարճ թելով փուչիկի կողքի փուչիկը:



17. Կապույտ գույնով ներկի՛ր ամենաերկար թելով փուչիկը:



18. Կանաչ գույնով ներկի՛ր ամենակարճ թելով փուչիկի կողքի փուչիկը:



19. Գունավորի՛ր հաստ գիրքը:





20. Գունավորի՛ր բարակ կոճղը:





21. Գունավորի՛ր հաստ սունկը կարմիր գույնով, բարակ սունկը՝ մոխրագույն:





22. Անվանի՛ր առարկաները:



23. Ճանաչի՛ր և անվանի՛ր առարկան:



24. Գտի՛ր ամենաքիչը 3 տարբերություն և անվանի՛ր դրանք:



25. Ճանաչի՛ր և անվանի՛ր կենդանուն:



26. Միացրո՛ւ կետերը և ստացի՛ր պատկեր: Անվանի՛ր:







27. ա) Որոշի՛ր՝ ինչ է պատկերված: Ասա՛ անվանումը:

բ) Հավելվածից ընտրի՛ր և ամբողջացրու պատկերը (տե՛ս հավելված 4):



28. Որոշի՛ր՝ ինչ է պատկերված: Ասա՛ անվանումը:



**Առարկաների տարածական առնչություններ. աջ, ձախ, վերև, ներքև:**
**Հեռու, մոտիկ, արագ, դանդաղ:**

29. Տրված  գծից աջ տեղադրի՛ր շրջանը, ձախ կողմում քառակուսին, իսկ վերևում՝ եռանկյունին (տե՛ս հավելված 5):

30. Տրված կետի աջ կողմում տեղադրի՛ր աստղիկ, ձախում՝ խաչ, վերևում՝ գնդակ, իսկ ներքևում՝ ծաղիկ (տե՛ս հավելված 6):

31. ա) Տեղադրի՛ր նախադասության գծապատկերները նկարների տակ (տե՛ս հավելված 7)։





բ) Գծի՛ր նախադասության գծապատկերները նկարների տակ։





32. Տեղադրի՛ր բառի գծապատկերը նկարների տակ (տե՛ս հավելված 8):

  

33. Տեղադրի՛ր գծապատկերները համապատասխան նկարների տակ (տե՛ս հավելված 9):

  

  

34. Ուտելիք նշանակող նկար-բառերի գծապատկերները գունավորի՛ր վարդագույն:





35. Տրված գծապատկերը տեղադրի՛ր համապատասխան բառի տակ (տե՛ս հավելված 10):



36. Տրված գծապատկերը տեղադրի՛ր (ինքուրույն նկարի՛ր) համապատասխան բառի տակ (տե՛ս հավելված 11):



**Գաղափար վանկի մասին**

37. Անվանի՛ր նկարները՝ ծափերով բաժանելով վանկերի:



38. Ընտրի՛ր գծապատկերին համապատասխան նկարը և փակցրու՛(տե՛ս հավելված 12):



39. Տրված նկարներին համապատասխանեցրո՛ւ վանկային գծապատկերներից մեկը (տե՛ս հավելված 13):



## Առանձնացրու խմբերը

40. Նշի՛ր այն առարկաների նկարները, որոնք պետք է դնել դպրոցական պայուսակի մեջ: ☑
Անվանի՛ր դրանք:



















41. Թռչունների նկարները տեղադրի՛ր ծառի ճյուղին: Կենդանիների նկարները՝ անտառում (տե՛ս հավելված 14): Անվանի՛ր դրանք:





42. Տրված պատկերները փակցրու՛ 2 շարքով՝ ըստ չափի: Անվանի՛ր դրանք (տե՛ս հավելված 15):

43. Տրված պատկերները փակցրու՛ 3 շարքով՝ ըստ ձևի (տե՛ս հավելված 16):

44. Տրված պատկերները փակցրու՛ 4 շարքով՝ ըստ գույնի (տե՛ս հավելված 17):

45. Տրված նշանները փակցրու՛ 3 շարքով՝ ըստ գույնի (տե՛ս հավելված 18):

46. Տրված նշանները փակցրու՛ 2 շարքով՝ ըստ ձևի (տե՛ս հավելված 19):

## Ինչպե՞ս կլինի ճիշտ

47. Նկարի՛ր առարկայի պակասող հատվածը:









## Հնչյունային լսողությունը զարգացնող առաջադրանքներ

48. Գունավորի՛ր նկարը, որի անվանման մեջ լսվում է ս հնչյունը:







49. Գունավորի՛ր նկարը, որի անվանումը սկսվում է ա հնչյունով:



50. Գունավորի՛ր նկարը, որի անվանումը վերջանում է կ հնչյունով:



## Հնչյունային վերլուծություն և համադրություն

51. ա) Անվանի՛ր միայն 2 հնչյուն ունեցող բառերը:
   բ) Անվանի՛ր միայն 4 հնչյուն ունեցող բառերը:
   գ) Անվանի՛ր միայն 3 հնչյուն ունեցող բառերը:
   դ) Անվանի՛ր միայն 5 հնչյուն ունեցող բառերը:
















**Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ**

53. Անվանի՛ր նկարները: Ձայնավորով սկսվող բառից առաջ դի՛ր կարմիր քառակուսի (տե՛ս հավելված 21):



54. Անվանի՛ր նկարները: Բաղաձայնով սկսվող բառից առաջ դի՛ր կապույտ քառակուսի (տե՛ս հավելված 22):

















55. Անվանի՛ր նկարները. ձայնավոր հնչյունով սկսվող անվանում ունեցող նկարները փակցրու՛ կարմիր թղթի վրա, իսկ բաղաձայն հնչյունով սկսվողները՝ կապույտ թղթի վրա (տե՛ս հավելված 23):

56. Անվանի՛ր նկարները. ձայնավոր հնչյունով վերջացող անվանում ունեցող նկարները տեղադրի՛ր կարմիր արկղի մեջ, իսկ բաղաձայն հնչյունով վերջացողները՝ կապույտ արկղի մեջ (տե՛ս հավելված 24):





# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1














Հավելված 2



Հավելված 3



Հավելված 4



Հավելված 5



Հավելված 6



Հավելված 7

Հավելված 8

Հավելված 9

Հավելված 10

Հավելված 11

Հավելված 12



Հավելված 13

Հավելված 14













Հավելված 15



Հավելված 16



Հավելված 17



Հավելված 18




Հավելված 19



Հավելված 20















Հավելված 21



Հավելված 22



Հավելված 23



Հավելված 24










